ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2018 թվականի N 22

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Արթուր Բաբայանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2018 թվականի 2-րդ եռամսյակի՝ ապրիլի 01-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 01-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թ. մարտի 20

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մարտի 2018 թվականի N 23

ԻՍՐԱՅԵԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. մայիսի 18-ի N 912–Ն որոշման պահանջները, ինչպես նաև քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի (հաշվառողի), հողաշինարարի որակավորման վկայական (N 045) ստացած անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը՝ ***որոշում եմ.***

1. Իսրայել Վոլոդյայի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 3-րդ փողոց N 41 հասցեում գտնվող 0.087 հա բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 39.7 քմ արտաքին մակերեսով շինությունները՝ 22.33 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 3.77 քմ արտաքին մակերեսով պարիսպը և 13.60 քմ արտաքին մակերեսով ծածկը ճանաչել օրինական, քանի որ.
   1) դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,
   2) դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 22.33 x 1300 ≈ 29030 /քսանինը հազար երեսուն/, 3.77 x 780 ≈ 2940 /երկու հազար ինը հարյուր քառասուն/, 13.60 x 780 ≈ 10610 /տասը հազար վեց հարյուր տասը/ (ընդամենը՝ 42580 /քառասուներկու հազար հինգ հարյուր ութսուն/) դրամի՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ նշված շինությունները գնահատելու և պետական գրանցման տալու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թ. մարտի 21

գ. Նոր Արտամետ